ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(077) 611-522

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 13 >> դեկտեմբերի 2021 թվականի N 46

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՍԱԹԵՆԻԿ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ 06-095-0065-0001-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0.0060 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերի պահանջներով, հաշվի առնելով, որ կառույցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և Լոռու մարզի Ջրաշեն համայնքի 5-րդ փողոց 19 տուն հասցեի բնակչուհի Սաթենիկ Մնացականի Մալխասյանի համաձայնությունը ինքնակամ կառուցված շինությունները ձեռք բերելու, որոնք չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, քանի որ կառույցները կառուցված չեն ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման գոտում, կառուցված չեն քաղաքացիական նորմերի և կանոնների էական խախտումներով և /կամ/ չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Լոռու մարզպետի ժ/պ Գ.Ասրյանի 30.11.2021 թվականի 01/111.5/09433-2021 գրությունը՝Ջրաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող 06-095-0065-0001-0001 կադաստրային ծածկագրի 0.092 հա հողամասից առանձնացված 0.0060 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը խանութ-տաղավար կառուցելու նպատակով հասարակական կառուցապատման փոխադրելու դրական առաջարկությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Օրենքի ուժով օրինականացնել և ճանաչել Սաթենիկ Մնացականի Մալխասյանի ժառանգության իրավունքով Ջրաշեն համայնքում 06-095-0065-0001-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.0060 հա տնամերձ հողամասի վրա 2010 թվականին կառուցված հասարակական խանութ-տաղավարը 51.96քմ:

2. 2010 թվականին կառուցված 51.9 քմ հասարակական խանութի համար Ջրաշեն համայնքի բյուջե վճարել 53 500 ՀՀ դրամ:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որման 22-ի 1-ին կետը, օրինականցնել և ճանաչել Սաթենիկ Մնացականի Մալխասյանի ժառանգության իրավունքով ձեռք բերված 06-095-0001-0001 կադաստրային ծածկագրով 0.0060 հա հողամասի վրա կառուցված 51.96քմ խանութ-տաղավարի սեփականության իրավունքը:

4.Վերոհիշյալ անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Ջրաշեն համայնք 8–րդ փողոց 17/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ